

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՍԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում քննարկվում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրներին և մասնակիցների պատասխանատվության հետ կապված հարցերը: Մասնավորապես, քննության են առնվել վերջիններիս ընկերությունից հեռացնելու օրենսդրական հիմքերը: Նշված հարցերի կարգավորմանն ուղղված իրավական նորմերի և իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետների համակողմանի ուսումնասիրության արդյունքում հեղինակն առաջարկել է, որպեսզի վերջիններիս ընկերությունից հեռացնելու հիմք ծառայի ոչ թե նրանց վարքագծի ձևը /գործողություն, անգործություն/, այլև այդ վարքագծի արդյունքում ընկերության համար առաջացած հետևանքները:

Հիմնարար քառեր - պատասխանատվություն, որջանտություն, բարեխղճություն, սուբյեկտիվ իրավունք, վարքագիծ, խուսափել, ընդհանուր ժողով:

Իրավունքի ցանկացած տեսակ հնարավոր խախտումներից պաշտպանության կարիք ունի: Իրավունքի պաշտպանվածության աստիճանը պայմանավորում է դրա արժեքը: Սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները ենթակա են պաշտպանության իրավական միջոցների օգնությամբ, որոնք իրավաբանական գրականության մեջ բնութագրվում են որպես քաղաքացիների և իրավաբանական անձանց նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված հարկադրանքի ներգործության միջոցներ, որոնց նպատակն է իրավունքների և օրինական շահերի խախտումները վերացնելը կամ դրանք կանխարգելելը¹:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն կամ ՍՊԸ) քաղաքացիական շրջանառությունում հանդես է գալիս իր անվան տակ և ինքնուրույն պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների համար: Մասնակիցներն Ընկերության անունից երրորդ անձանց հետ հարաբերությունների մեջ չեն մտնում և Ընկերության պարտավորություններով պատասխանատվություն չեն կրում, սակայն հարաբերությունների մեջ են մտնում մնացած մասնակիցների և հենց Ընկերության հետ: Նշված հարաբերությունների շրջանակում մասնակիցներն ունեն որոշակի իրավունքներ ու պարտականություններ, որոնք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը վերջիններիս պատասխանատվության հիմքն է:

Ընկերության հիմնադրի և մասնակցի պատասխանատվությունն առաջանում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների

մասին» ՀՀ օրենքով² (այսուհետ՝ Օրենք) նախատեսված հետևյալ պարտավորությունները խախտելու դեպքում, երբ մասնակիցը՝

- ներդրումներ չի կատարում կանոնադրական կապիտալում Ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված կարգով,
- հրապարակում է Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները,
- խախտում է ՍՊԸ-ի կանոնադրությամբ նախատեսված լրացուցիչ պարտավորությունների կատարումը:

Մասնակցի պատասխանատվության ձևերից մեկը վերջինիս Ընկերությունից հեռացնելն է: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության մասնակիցը (մասնակիցները), ով (ովքեր) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: Քննարկելով նշված նորմը՝ կարելի է եզրակացնել, որ տվյալ դեպքում դրա տակ հասկացվում են ինչպես մասնակցի համար Օրենքով նախատեսված հիմնական պարտավորությունները (ներդրումներ կատարել կանոնադրական կապիտալում ընկերության հիմնադրման մասին պայմանա-

www.lawinstitute.am

նագրով կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված կարգով, չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները, այնպես էլ լրացուցիչ պարտավորությունները: Այլ կերպ ասած՝ ՍՊԸ-ի մասնակիցը չի կարող հեռացվել Ընկերությունից այն պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որոնք կապ չունեն Ընկերության մասնակցի կարգավիճակի հետ (օրինակ՝ այն պարտավորությունները, որոնք վերաբերում են Ընկերության պաշտոնատար անձանց):

Այն դեպքում, երբ մասնակիցը չի կատարում Օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ նախատեսված իր պարտավորությունները, ապա նրան պատասխանատվության ենթարկելը հասկանալի է և տրամաբանական:

Սակայն բարդություն է առաջացնում Ընկերությունից մասնակցին հեռացնելն այն դեպքերում, երբ վերջինս իր գործողություններով դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը: Այստեղ պատասխանատվությունը վրա է հասնում ոչ թե իրավախախտման, այլ ցանկացած գործողության համար, նույնիսկ իրավաչափ, որը կարող է այս կամ այն կերպ խաթարել Ընկերության գործունեությունը: Այսինքն՝ պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև այն գործողությունների համար, որոնք կապված են մասնակցի իրավունքների իրականացման հետ: Կարելի է եզրակացնել, որ օրենսդիրն այս դեպքում նկատի ունի մասնակցի կողմից իր իրավունքների այնպիսի իրականացումը, որը հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքի չարաշահում, այսինքն՝ իրականացվում է քաղաքացիական իրավունքների իրականացման սահմաններից դուրս: Հետևաբար, Օրենքի այն նորմը, որը նախատեսում է ՍՊԸ-ի մասնակցին Ընկերությունից հեռացնելը, հանդիսանում է քաղաքացիական իրավունքների իրականացման սահմանների քաղաքացիաիրավական կարգավորման մասնավոր դեպք: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, քննելով գործն³ ըստ հայցի Քնարիկ Հարությունյանի ընդդեմ պատասխանողներ Սաղաթել Էլոյանի և Մամիկոն Սիմոնյանի՝ մասնակիցներին ընկերությունից հեռացնելու պահանջներով, եկել է հետևյալ եզրահանգման.

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության մասնակիցը, որը գումարային առումով տնօրինում է ընկերության առնվազն տասը տոկոս բաժնեմասը, իրավունք ունի դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործո-

ղություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: Դատարանը, սխալ մեկնաբանելով Օրենքի 13-րդ և 46-րդ հոդվածները, հաշվի չի առել այն հանգամանքը, որ պատասխանողները, օտարելով ընկերության գույքը հաշվեկշռային գնից ցածր գնով, փաստորեն չեն գործել ի շահ ընկերության և իրենց գործողություններով ծանրացրել են ընկերության ֆինանսական վիճակը: Նման պայմաններում ակնհայտ է, որ պատասխանողների գործողությունները հակասել են ընկերության գործունեության նպատակներին, և դրանք կատարվել են՝ հաշվի չառնելով ընկերության շահը, անձնական շահագրգռվածությունից ելնելով: Պատասխանողներն իրենց գործողություններով վնաս են հասցրել ընկերությանը՝ անհնարին դարձնելով դրա հետագա գործունեությունը, ինչն էլ Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է նրանց՝ ընկերությունից հեռացնելու համար:

Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁴ (այսուհետ՝ Օրենսգիրք) 12-րդ հոդվածի բովանդակությունից՝ կարելի է առանձնացնել սուբյեկտիվ իրավունքների իրականացման սահմանների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնական տարրը: Այդ նույն հոդվածով օրենսդիրը հատուկ ընդգծում է, որ չեն թույլատրվում քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք բացառապես իրականացվում են այլ անձի կամ անձանց վնաս պատճառելու մտադրությամբ: Դեռ ավելին, Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է Ընկերության խորհրդի անդամների և գործադիր մարմինների պատասխանատվությունն այն դեպքերում, երբ նրանք իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս չեն գործել ի շահ ընկերության, բարեխղճորեն և ողջամիտ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանատվությունը վրա է հասնում նրանց մեղքով պատճառված վնասների համար, որի դեպքում վերջիններս կրում են վնասի հատուցման պարտականություն: Միաժամանակ, նույն Օրենքով սահմանված է, որ պատասխանատվություն չեն կրում Ընկերության խորհրդի այն անդամները, որոնք դեմ են քվեարկել Ընկերությանը վնասների պատճառում առաջ բերած որոշմանը կամ չեն մասնակցել քվեարկությանը (46-րդ հոդվածի 2-րդ մաս):

Իրավաբանական գրականության մեջ դա կոչվում է շիկանա, որի կապակցությամբ իր հստակ դիրքորոշումն է հայտնում պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանը. «Շիկանան այլ անձին վնաս պատճառելու մտադրությամբ, ուղղակի դիտավորությամբ կա-

տարվող իրավախախտում է»⁵ : Բացի այդ, ինչպես նկատեցինք, իրավունքների իրականացման կապակցությամբ օրենսդիրն օգտագործում է այնպիսի տերմիններ, ինչպիսիք են բարեխղճությունն ու ողջամտությունը:

Ա. Ա. Մալինովսկին նշված երևույթը նկարագրում է հետևյալ կերպ. «Իրավունքի չարաշահումը իրավունքի իրականացումն է դրա նշանակությանը հակառակ, որի արդյունքում սուբյեկտը վնաս է պատճառում մասնավոր անձանց, հասարակությանը կամ պետությանը»⁶ : Մեկ այլ հեղինակի՝ Ի. Ա. Պոկրովսկիի տեսակետի համաձայն՝ «Շիկանան իրավախախտման հատուկ տեսակ է և ոչ այլ ինչ, քան սովորական դելիկտ»⁷ : Նշված տեսակետները ենթարկվում են քննադատության, քանի որ դրանք հնացել են և հատուկ են խորհրդային գրականությանը: Մասնավորապես, Ս. Գ. Չայցեվայի տեսակետի համաձայն՝ «...վիճելի է այն հանգամանքը, որ սուբյեկտիվ իրավունքն ունի նշանակություն և նպատակ, և որ իրավունքի չարաշահումը ոչ թե իրավախախտման հատուկ տեսակ է, այլ սուբյեկտի կողմից իրեն պատկանող իրավունքների իրականացումն այնպիսի միջոցներով, որոնց արդյունքում վնաս է պատճառվում այլ անձանց»⁸ :

Այս հարցի կապակցությամբ առավել լայն տեսակետ ունի Վ. Պ. Գրիբանովը, ով գրում է. «Զաղաքացիական իրավունքների իրականացման սահմանների դիտարկումը միայն դրանց նշանակության համապատասխանության տեսանկյունից սխալ է: Իրավունքի չարաշահումը իրավագործ անձի կողմից թույլատրելի ընդհանուր վարքագծի սահմաններում անթույլատրելի ձևերի օգտագործումն է: Այսինքն՝ նպատակներին անհամապատասխան իրավունքների իրականացումը ընդամենը չարաշահման տեսակներից է»⁹ : Ընդ որում, հեղինակը գրում է, որ իրավունքի չարաշահումը քաղաքացիական իրավախախտման հատուկ տեսակ է, որն իրականացվում է իրավագործ անձի կողմից իրեն պատկանող սուբյեկտիվ իրավունքն իրականացնելիս՝ կապված օրենքով իրեն վերապահված թույլատրելի վարքագծի սահմաններում անթույլատրելի որոշակի ձևեր գործադրելու հետ:

Սուբյեկտիվ իրավունքի նշանակությունը կայանում է նրանում, որ այն պետք է օգտագործվի ի շահ, այլ ոչ թե ի վնաս այդ իրավունքը կրողի և այլ անձանց, ինչն էլ բխում է Օրենսգրքի 12-րդ հոդվածի դրույթներից: Եթե ընդունենք, որ չարաշահումը իրավունքի իրականացումն է դրա նշանակությանն անհամապատասխան ձևով, իսկ նշանակությունն էլ՝ ի շահ իրավունքը կրողի և այլ անձանց, ապա

իրավունքի ցանկացած իրականացում՝ ի վնաս իրավունքը կրողի և այլ անձանց, չարաշահում է: Մակայն դա այդպես չէ: Հաճախ իրավունք կրողի գործողությունները կարող են ինչպես բարենպաստ, այնպես էլ վնասակար հետևանքներ ունենալ ինչպես իր, այնպես էլ երրորդ անձանց համար, և չի կարելի միանշանակ ասել, որ անձի գործողությունները բացարձակ դրական են կամ հակառակը՝ բացասական: Եթե ասենք, որ իրավունքի իրականացումը այլ անձանց շահերի խախտումով իրենից ներկայացնում է իրավունքի չարաշահում, ուրեմն ստիպված կլինենք ընդունել, որ իրավունքի գրեթե ցանկացած իրականացում չարաշահում է, քանի որ շատ հաճախ որոշ անձանց սուբյեկտիվ իրավունքների իրականացումից տուժում են այլ անձանց շահերը: Իսկ թե որքանով է դա թույլատրելի և որքանով չարաշահում, հնարավոր կլինի սահմանել՝ հիմք ընդունելով անձի կողմից իր իրավունքի իրականացման բարեխղճությունն ու ողջամտությունը:

Հիմնվելով «բարեխղճություն» բառի ծագմանաբանության վրա՝ գրականության մեջ եզրակացություն է արվում, որ քաղաքացիական շրջանառության մասնակցի համար բարեխղճությունը վերջինիս կողմից իր կոնտրագենտի շահերը հաշվի առնելն է՝ Ի. Բ. Նովիցկին գտնում էր, որ. «...դատարանի կողմից բարեխղճության սկզբունքի կիրառումն արտահայտվում է վիճող կողմերի հակադիր տնտեսական շահերի անկողմնակալ կշռադատումով, որոնցից յուրաքանչյուրն իրավունք ունի հակառակ կողմից ակնկալել օրենքին կամ պայմանագրին համապատասխան վարքագիծ»¹¹ : Մակայն բնականոն քաղաքացիաիրավական հարաբերություններում միայն բարեխղճության սկզբունքով առաջնորդվելը բավարար չէ, ուստի սուբյեկտիվ իրավունքի թույլատրելի իրականացումը ներառում է նաև ողջամտության սկզբունքը:

Ողջամտության սկզբունքը ևս գնահատման կատեգորիա է: «Ողջամտություն» և «բարեխղճություն» տերմինները միմյանց մոտ կանգնած հասկացություններ են: Իրավունքի չարաշահման համեմատությամբ իրավագործ անձի գործողություններում ողջամտության և բարեխղճության բացակայությունը նշանակում է սուբյեկտի կողմից իր իրավունքի իրականացում՝ այնպիսի սխալ և չարամիտ վարքագծի դրսևորմամբ, որը վնաս է պատճառում այլ անձանց և հասարակական հարաբերություններին: Բարեխղճությունը ողջամտությունից տարբերվում է իր սուբյեկտիվ լինելու չափանիշով: Որոշ դեպքերում անբարեխիղճ անձը կարող է կատարել այնպիսի գործողություններ, որոնք վնաս չեն առա-

ջացնի ո՛չ իր, ո՛չ էլ այլ անձանց համար, իսկ որոշ դեպքերում, չնայած այն հանգամանքին, որ անձը գիտակցում է, որ իր գործողությունները կարող են վնաս հասցնել այլ անձանց, միևնույնն է, դրսևորում է այդպիսի վարքագիծ:

Ի տարբերություն բարեխղճության՝ ողջամտությունն օբյեկտիվ կատեգորիա է: Այն սահմանում է ոչ թե կոնկրետ անձի, այլ ամբողջ հասարակության համար թույլատրելի վարքագծի չափը: Ողջամտության մասին Վ. Ի. Եմելյանովը գրում է. «Այստեղ քննության է պետք առնել անձի գործողությունների ոչ թե կամային կամ ինտելեկտուալ չափանիշները, այլ ստուգել միջին դասի մարդու կողմից որոշակի գործողություններ կատարելու հնարավորությունը»¹²: Մեր կարծիքով, անձի կողմից ողջամտորեն չգործելը պայմանավորված է նրանով, որ հանրահայտ վարքագծի կանոններին վերջինս ծանոթ չէ:

Չնայած որ ողջամտությունը օբյեկտիվ չափանիշ է, սակայն այն պետք է դիտարկել անձի սուբյեկտիվ առանձնահատկությունների համադրմամբ: Այդ առանձնահատկությունները սուբյեկտի անձնական որակներն ու ընդունակությունները չեն, այլ պաշտոնական պարտականություններն ու անձին ներկայացվող մասնագիտական պահանջները: Որոշակի հարաբերություններում այն ողջամիտ վարքագիծը, որը կարելի է պահանջել որոշակի անձից, չի կարելի ակնկալել մեկ այլ անձից և ընդհակառակը: Այսպես, եթե ՄՊԸ-ի տնօրենը ստորագրել է աուդիտի կողմից հաստատված ֆինանսական ինչ որ փաստաթուղթ, որը կազմվել է աուդիտի կողմից սխալ ուսումնասիրություններ անցկացնելու արդյունքում, և որի հետևանքով ընկերությանը վնաս է պատճառվել, ապա տնօրենի ստորագրությունը պետք է դիտարկել որպես ողջամիտ գործողություն, քանզի վերջինս ինքնուրույն ֆինանսական ստուգումներ անցկացնելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ չունի:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը կարող է հեռացվել Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը: Սրանից կարելի է եզրահանգել, որ մասնակցի կողմից իրավունքների չարաշահումը կարող է դրսևորվել ինչպես գործողությունների, այնպես էլ անգործության միջոցով: Այստեղ հետաքրքրական է, թե մասնակիցն ինչպես կարող է չարաշահել իր իրավունքներն անգործության միջոցով, և թե հատկապես որպիսի անգործությունը կարող է հիմք ծառայել՝ մասնակցին Ընկերությունից

հեռացնելու համար:

Այսպես, Մ. Մերեբրեննիկովն այս հարցի կապակցությամբ ունի իր տեսակետը, որի համաձայն՝ «...այն դեպքերում, երբ մասնակիցն առանց հարգելի պատճառների պարբերաբար խուսափում է մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելուց, ինչի արդյունքում Ընկերությունը զրկվում է այնպիսի հարցերով որոշում կայացնելուց, որոնք ընդունվում են միաձայն, ապա այդպիսի անգործությունը մասնակցին Ընկերությունից հեռացնելու հիմք է»¹³:

Մեր խորին համոզմամբ, այս տեսակետը վիճելի է հետևյալ պատճառաբանություններով. նախևառաջ մասնակիցը խուսափել է ընդհանուր ժողովին մասնակցելուց, թե մասնակցել և դեմ է քվեարկել օրակարգում ընդգրկված հարցին, Ընկերության համար հետևանքները միևնույնն են, մինչդեռ անցանկալի հետևանքներն այդ դիրքորոշման համաձայն առաջանում են մասնակցի համար: Այսինքն՝ եթե մասնակցի նպատակը Ընկերության կողմից որևէ որոշում ընդունելուն խանգարելն է, ապա էական տարբերություն չկա այն հարցում՝ վերջինս իր նպատակին կհասնի դեմ քվեարկելու, թե ընդհանուր ժողովին մասնակցելուց խուսափելու ճանապարհով: Դեռ ավելին, ինքնին անընդունելի է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելուց «խուսափել» ձևակերպումն այն դեպքում, երբ խոսքը մասնակցի իրավունքի մասին է և ոչ թե պարտականության: «Խուսափումը» մասնակցի գործողություններում կարելի է դիտարկել միայն պարտականությունների չկատարման տեսանկյունից և ոչ թե իրավունքների իրականացման: Մինչդեռ մասնակիցը ազատ կերպով կարող է որոշել իրականացնել իրեն պատկանող իրավունքը, թե՞ հրաժարվել դրա իրականացումից: Դրան համապատասխան սխալ է մասնակցին պատասխանատվության ենթարկելն իր իրավունքների իրականացումից հրաժարվելու համար, քանի որ իրավունքի իրականացումից հրաժարվելը սուբյեկտիվ իրավունքի մաս է կազմում: Իրավունքը հենց այն կատեգորիան է, որը կանխորոշում է հնարավոր և ոչ թե պարտադիր վարքագիծ, և միայն իրավունքը կրողի կամքից է կախված դրա իրականացումը: Այս պարագայում կարելի է խոսել միայն մասնակցի կողմից իրեն պատկանող իրավունքի իրականացումից (մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու) հրաժարվելու մասին: Ինչ վերաբերում է իրավունքը իրականացնելուց հրաժարվելուն, ապա Օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կանացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կարելի է ասել, որ հեղինակի տեսակետը հակասում է ընդհանուր կանոններին, քանի որ վերջինս հղում չի կատարում որևէ կոնկրետ իրավական ակտի վրա: Ինչ վերաբերում է Օրենքին, ապա վերջինիս մեկնաբանությունը այդպիսի հետևություն անելու հնարավորություն չի ընձեռում: Այսպես, Ընկերության մասնակցի իրավունքները նախատեսված են դրա 12-րդ հոդվածով, որով ընդհանուր ժողովին մասնակցելը նախատեսվում է որպես իրավունք և ոչ թե պարտականություն (12-րդ հոդվածի «ա» կետ): Դեռ ավելին, ընդհանուր ժողովին մասնակցելը որպես պարտականություն չի դիտարկվում Օրենքի 13-րդ հոդվածով, որում թվարկված են Ընկերության մասնակիցների պարտականությունները: Այսինքն՝ հեղինակի դիրքորոշումն անընդունելի է, քանի որ վերջինս, փաստորեն, առանց որևէ իրավական ակտի վրա հղում կատարելու մասնակցի կողմից իր իրավունքն իրականացնելուց հրաժարվելը դիտարկում է որպես նրան Ընկերությունից հեռացնելու հիմք այն դեպքում, երբ ոլորտի կարգավորմանն ուղղված Օրենքը այդպիսի իրավական հետևանքներ չի նախատեսում: Դեռ ավելին, միաձայն որոշում պահանջող հարցերով մասնակցի կողմից ընդհանուր ժողովին չմասնակցելը չի դժվարացնում, առավել ևս, անհնարին չի դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը, քանի որ Ընկերության բնականոն գործունեության համար, որպես կանոն, ժողովի միաձայն որոշումներ չեն պահանջվում, դրանք պահանջվում են միայն սահմանափակ շրջանակի հարցերի որոշման համար:

Ինչ վերաբերում է մասնակցի կողմից ընդհանուր ժողովին չմասնակցելով Ընկերությանը վնաս հասցնելուն կամ նրա բնականոն գործունեությունը դժվարացնելուն, ապա վերջինս կարող է այդպիսի հետևանքներ առաջացնել մասն ընդհանուր ժողովին մասնակցելու իր իրավունքն իրականացնելով: Չէ՞ որ մասնակիցը հնարավոր է որ մասնակցի ընդհանուր ժողովներին, սակայն որոշումների ընդունումը ենթարկի սաբոտաժի: Այդ իսկ պատճառով նշված հարաբերություններում շեշտը պետք է դնել ոչ թե մասնակցի վարքագծի ձևի, այսինքն՝ գործողության կամ անգործության, այլ հետևանքի վրա՝ քննության առնելով այն հանգամանքը, թե մասնակցի գործողությունը կամ անգործությունը որքանով է վնաս հասցնում Ընկերությանը կամ դժվարացնում նրա բնականոն գործունեությունը: Մեր կարծիքով, մասնակցին Ընկերությունից հեռացնելու համար պետք է հիմք ծառայի այնպիսի անբա-

րեխիղճ գործողությունը (անգործությունը), որը էականորեն է դժվարացնում կամ անհնարին դարձնում Ընկերության գործունեությունը՝ անկախ այն հանգամանքից՝ մասնակիցը չարամտորեն չի մասնակցել Ընկերության համար էական նշանակություն ունեցող հարցի քննարկման համար հրավիրված ընդհանուր ժողովին, թե մասնակցել և դեմ է քվեարկել Ընկերության գործունեության համար կենսական կարևորություն ունեցող հարցին: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), ով (ովքեր) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ կոպիտ կերպով խախտում է Ընկերության իրավունքները, էականորեն դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը:

Օրենքի 30-րդ հոդվածը կարգավորում է Ընկերության կանոնադրական կապիտալում հիմնադիրների (մասնակիցների) ավանդների ներդրման կարգի հետ կապված հարաբերությունները: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության յուրաքանչյուր հիմնադիր պարտավոր է ամբողջությամբ ներդնել իր ավանդն ընկերության կանոնադրական կապիտալում հիմնադիր պայմանագրով սահմանված ժամկետում, որը չի կարող գերազանցել ընկերության պետական գրանցման պահից մեկ տարին: Օրենքի հոդվածները, որոնք կարգավորում են ավանդների ներդրման հետ կապված հարաբերությունները, պատասխանատվություն նախատեսող որևէ նորմ չեն պարունակում այն դեպքերի համար, երբ մասնակիցը (մասնակիցները) կամ հիմնադիրը (հիմնադիրները) խախտում է (են) Օրենքով իրենց ներկայացվող ավանդի ներդրման պարտականությունը: Նույն խնդրի լուծման նպատակով ՌԴ դատական պրակտիկան, մասնավորապես Հեռավոր Արևելքի ֆեդերատիվ արբիտրաժային դատարանն իր նախադեպային որոշմամբ,¹⁴ սահմանել է, որ մասնակցի կողմից ավանդի ներդրման պարտականությունը չկատարելը հիմք չէ նրան ընկերությունից հեռացնելու համար, քանի որ օրենսդրությունը նմանատիպ հետևանքներ չի նախատեսում ավանդի ներդրման պարտականությունը չկատարելու դեպքերի համար: Մեր կարծիքով, ավանդի ներդրման պարտականությունը չկատարելու դեպքում Ընկերությունից հեռացումը կարող է անցանկալի լինել միայն այն

հիմնադրի (մասնակցի) համար, ով շահագրգռված է, և ում հետաքրքիր է ընկերությունում իր հետագա մասնակցությունը: Մինչդեռ, ակնհայտորեն մեծ չէ այն հիմնադրի (մասնակցի) հետաքրքրվածությունն ընկերության հետագա ճակատագրով, ով չի կատարում կանոնադրական կապիտալում ավանդի ներդրման իր պարտականությունը: Դեռ ավելին, եթե նման հիմնադրին (մասնակցին) հեռացնելը դիտարկվի որպես նրա կողմից թույլ տրված իրավախախտման համար պատասխանատվության միջոց, ապա կարելի է նկատել, որ իրականում վերջինիս համար որևէ անցանկալի հետևանք չի առաջանում, քանի որ Օրենքի 23-րդ հոդվածը, որով կարգավորվում են ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու կամ հեռացվելու հետ կապված հաշվարկները, սահմանում է, որ ընկերությունը պարտավոր է այդ մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասի համապատասխան բաժնեմասի) արժեքը (Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մաս): Մեր կարծիքով, ավանդի ներդրման պարտականության կատարմանը կարող է խթան հանդիսանա ոչ թե օրենսդրորեն մասնակցին ընկերությունից հեռացնելու նորմ սահմանելը, երբ վերջինս չի կատարում կամ մասնակի է կատարում ավանդի ներդրման պարտականությունը, այլև այնպիսի նորմի սահմանումը, որով հիմնադիրը (մասնակիցը), ով չի կատարել ավանդի ներդրման պարտականությունը, պարտավոր կլինի ընկերությանը վճարել տուժանքներ՝ չվճարված ավանդի կամ դրա մասի արժեքի սահմաններում: Նշված խնդրի նպատակով առաջարկում ենք Օրենքով ամրագրել հիմնադրի (մասնակցի) համար տուժանքի (տուգանքի) վճարման պարտականություն, որը, մեր կարծիքով, պետք է արտացոլվի Օրենքի 30-րդ հոդվածում լրացուցիչ կետով, հետևյալ կերպ. «Ընկերության հիմնադիրը (հիմնադիրները) կամ մասնակիցը (մասնակիցները) պարտավոր է (են) ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ կանոնադրությամբ որոշված չափով ընկերությանը վճարել տուժանք՝ ավանդի ներդրման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում չվճարված ավանդի արժեքի սահմաններում»:

Այստեղ անհրաժեշտ է կանգ առնել մասնակիցների կողմից մյուս մասնակցին հեռացնելու պահանջ ներկայացնելու իրավունքի՝ Օրենքով նախատեսված սահմանափակման հարցի վրա: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այդպիսի պահանջ կարող է (են) ներկայացնել միայն այն մասնակիցը (մասնակիցները), ով (ովքեր)

գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը: Այստեղ հարց է առաջանում, թե որքանով է այդ սահմանափակումը արդարացված, և ինչու այդ իրավունքով օժտված չեն նաև այն մասնակիցները, որոնց բաժնեմասերն ընկերության կանոնադրական կապիտալում 10 տոկոս չեն կազմում: Օրենքի մեկնաբանությունը թույլ է տալիս ասել, որ մասնակցին ընկերությունից հեռացնելու հիմքում դրված է վերջինիս գործողություններով (անգործությամբ) ընկերությանը վնաս պատճառելը կամ նրա բնականոն գործունեությունը դժվարացնելը, այլ ոչ թե մասնակիցներին վնաս պատճառելը: Այսինքն՝ դրանով իսկ Օրենքը երաշխավորում է ընկերության շահերը: Օրինակ, եթե Օրենքը մասնակցին հեռացնելու պահանջ ներկայացնելու հնարավորություն ընձեռեր այն մասնակիցներին, ովքեր գումարային առումով չեն տիրապետում ընկերության 10 տոկոս բաժնեմասը, և եթե վերջիններս այդպիսի պահանջ ներկայացնեին ընկերության այն մասնակցին, ով կտիրապետեր, օրինակ, ընկերության 90 տոկոս բաժնեմասերը, ապա, ելնելով ընկերության իսկ շահերից, նպատակահարմար չէր լինի վերջինիս հեռացնել ընկերությունից, քանի որ դրանից հետո դժվար կլիներ պատկերացնել ընկերության գոյությունը: Մեր կարծիքով, այդպիսի մոտեցումն արդարացված է և տրամաբանական: Դեռ ավելին, ընկերությունից հեռացնելը էական ազդեցություն կարող է ունենալ միայն այն մասնակցի համար, ում հետաքրքրում է ընկերության հետագա ճակատագիրը:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը երաշխավորել է նաև մինչև 10 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակցի իրավունքները՝ Օրենքով նախատեսվելով ընկերությունից մասնակցի դուրս գալու հնարավորությունը, որը կարող է իրականացվել ցանկացած պահի՝ անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից (12-րդ հոդվածի «ե» կետ):

Իրավաբանական գրականության մեջ, մասնավորապես Վ. Գորլովի տեսակետի համաձայն՝ ՍՊԸ-ի մասնակցի կողմից իր պարտականությունների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ են ոչ միայն հարկադրանքի միջոցներ, այլ նաև տևական բնույթի լրացուցիչ միջոցներ¹⁵: Նշենք, որ, հեղինակներից շատերի կարծիքով, իր պարտականությունները խախտած մասնակցի նկատմամբ միայն լրացուցիչ միջոցները կարելի է համարել պատասխանատվություն¹⁶:

Ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկությունները չիրապարակելը մասնակցի համար Օրենքով նախատեսված է որպես պարտա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կանություն (13-րդ հոդվածի «բ» կետ): Սակայն, նախատեսելով այն որպես պարտականություն, Օրենքը չի նախատեսում որևէ միջոց, որը կարելի կլինի կիրառել այդ պարտականությունը խախտած մասնակցի նկատմամբ: Այստեղ անհրաժեշտ է առաջնորդվել ընդհանուր կանոններով: Այսպես, Օրենսգրքի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով (17-րդ հոդվածի 1-ին մաս): Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Հարկ է նշել, որ Ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկատվությունը հրապարակելու դեպքում վնասների հատուցումն այնքան էլ արդյունավետ միջոց չէ: Եվ չնայած իրավաբանական գրականության մեջ առկա այն կարծիքին, որ նշված տեղեկատվության հրապարակումը հան-

գեցնում է որոշակի կոմերցիոն վնասի, որը կարող է ապացուցվել և բռնագանձվել դատական կարգով¹⁷, այնուամենայնիվ, մնան դեպքերում վնասների չափը որոշելն ու դրանք գնահատելը և, առավել ևս, դրանք ապացուցելը շատ բարդ է: Այդ պատճառով շատ ավելի արդյունավետ և կիրառելի կլինի, եթե Ընկերության կանոնադրությամբ նախատեսվի լրացուցիչ պատասխանատվություն այն մասնակցի համար, ով կխախտի Ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկատվությունը չիրապարելու իր պարտականությունը: Նման դեպքերում առավել արդյունավետ կլինի Ընկերության կանոնադրությամբ պատասխանատվության այնպիսի ձև սահմանելը, ինչպիսին տուգանքն է: Դրա բռնագանձման համար վնասների չափ որոշելու և ապացուցելու անհրաժեշտություն չկա, այլ հարկավոր է ապացուցել միայն մասնակցի կողմից Ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկատվությունը հրապարակելու փաստը: Բացի այդ, տուգանքը կարելի է սահմանել այն չափով, որը կգերազանցի հնարավոր վնասների չափը, ինչն էլ մասնակցի համար կանխարգելող միջոց կհանդիսանա Ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկատվությունը չիրապարելու պարտականության կատարման հարցում:

¹ Տե՛ս Пугинский Б. И. Гражданско-правовые средства в хозяйственных отношениях. М., Юрид. лит., 1984, С. 134.

² Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք // ՀՀՊՏ 20010/38 (170), 07.12.2001:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի որոշումների ժողովածու: Գործ թիվ՝ 3-1270/ՎԴ, 2007:

⁴ Տե՛ս ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք // ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.1998:

⁵ Տե՛ս Բարսեղյան Ս. Մ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, մաս 1-ին, 2009թ., էջ 78:

⁶ Տե՛ս Малиновский А. А. Вопросы квалификаций злоупотреблений правом // Юрист. 2002. N 2. С. 5.

⁷ Տե՛ս Покровский И. А. Основные проблемы гражданского права. М. «Статус», 1998. С. 118.

⁸ Տե՛ս Зайцева С. Г. Злоупотребление правом. К вопросу о пределах осуществления права // Юрист. 2002. N 7, С. 16.

⁹ Տե՛ս Грибанов В. П. Осуществление и защита гражданских прав. М., 2000. С. 48-49.

¹⁰ Տե՛ս Гаджиев Г. А. Конституционные принципы добросовестности и недопустимости злоупотребления субъективным правом // Государство и право. 2002. N 7. С. 58.

¹¹ Տե՛ս Новицкий И. Б. Принцип доброй совести в проекте обязательственного права // Вестник гражданского права. 1916. N 6. С. 57-58.

¹² Տե՛ս Емельянов В. И. Понятие «разумность» в гражданском праве России // Вестник Высшего Арбитражного Суда РФ. 2002. N 10. С. 102-103.

¹³ Տե՛ս Серебренников М. М. Гражданско-правовое положение учредителей и участников обществ с ограниченной ответственностью и обществ с дополнительной ответственностью. Дисс. канд. юрид. наук., Байкал, 2009, С. 160.

¹⁴ Տե՛ս www.consultant Постановление федерального арбитражного суда Дальневосточного округа по кассационной жалобе ОАО Промышленно-торговая компания Востокмебель от 4 июня 2002 года по делу N Ф03-А73/02-1/1034. Постановление кассационной инстанции федерального арбитражного суда Волго-Вятского округа по делу А29-3286/2003А от 25.02.04г.

¹⁵ Տի՛ս Գորլով В. А. Правовые вопросы создания уставного капитала общества с ограниченной ответственностью // Журнал российского права. 2000. N 4. С. 50-51.

¹⁶ Տի՛ս Толстой Ю. К., Сергеева А. П. Гражданское право. Часть 1. Учебник СПб. 1996. С. 479; Гусев О., Завидов Б. Гражданские права предпринимателей нуждаются в защите // Законодательство и экономика. 2000. N 8. С. 9.

¹⁷ Տի՛ս Бродская М. Конфиденциальные сведения. Способы использования. Правовой смысл понятия “разглашения” // Адвокат. 2000. N 3. С. 23.

Գեորգ Արուտյան

Лектор кафедры гражданского права юридического факультета французского университета в Армении
Соискатель института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Ответственность учредителей и участников обществ с ограниченной ответственностью

В работе изучаются вопросы, связанные с ответственностью учредителей и участников ООО. В частности, рассматриваются основы, предусмотренные законом для отстранения последних из общества. Всесторонне исследуя правовые нормы и мнения, существующие в юридической литературе, нацеленные на урегулирование данного вопроса, автор предлагает сделать основой для их отстранения не форму поведения (действие, бездействие) учредителей и участников ООО, а последствия для общества в результате такого поведения.

Ключевые слова: ответственность, разумность, добросовестность, субъективное право, поведение, избежать, общее собрание.

Gevorg Harutyunyan

Lecturer of the Civil Law Department of the Law faculty of the French university in Armenia,
Applicant of the RA NAS Institute of Philosophy, Sociology and Law

SUMMARY

Liability of founders and participants of a limited liability company

The paper examines questions related to the liability of founders and participants of limited liability companies. In particular, it studies the grounds envisaged by the law for their dismissal from the company. Based on a comprehensive study of the legal norms and opinions existing in legal literature that are aimed at the regulation of the issue, the author is suggesting to take for basis for the dismissal of LLC founders and participants not the form of their behaviour (action or the failure to act) but the consequences of such behaviour of LLC founders and participants for the company.

Keywords: liability, reasonability, diligence, subjective right, behavior, avoid, general meeting.